ԳՈՀԱԲԱՆԱԿԱՆ ՍԱՂԹԱՆՔ

ՎԱՍՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱԶԳԻՍ ՀԱՅՈՑ

ՏՊԱՐԱՆ ՍՐԲՈՅ ՅԱԿՈԲԵԱՆՑ
ԵՐՈՒՍԱՂԷՄ
1947

V

ԳՈՀԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ

ՎԱՍՆ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱԶԳԻՍ ՀԱՅՈՑ

A I/7524

ՍԱՐԿԱՒԱԳ. Եւ եւս խաղաղութեան ...

ՀԱՆԴԻՍԱՊԵՏ. Օրհնութիւն եւ փառք Հօր ևն.

ՍԱՐԿ. Եղբարք սիրեցեալք, սուրբ սրտիւ և հաստատուն հաւատով կացցուք միաբան յաղօթս, և փառաւորեսցուք զամենակալն Աստուած, զհայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, գոհանալով զնմանէ՝ որ այց արար ողորմութեամբ իւրով Ազգիս Հայոց և սրբոյ եկեղեցւոյն Հայաստանեայց, վերստին շնորհելով մեզ զժառանգութիւն Հայրենեաց մերոց։

Արդ, աղաչեսցուք զնա բոլորով սրտիւ,

Զի պահպանեսցէ զՀանրապետութիւն Ազգիս մերոյ, և պայծառացուսցէ զեկեղեցի իւր Սուրբ, շինեալ ի վերայ հիման առաքելոց և մարգարէից; պահել անարատ մինչեւ յօր երեւելոյ գալստեան իւրոյ.

Զի յաւելցէ զիմաստութիւն և զկարողութիւն գլխաւորաց Ազգիս և ամենայն վաստակաւորաց ի շինութիւն Հայրենեաց մերոց.

Զի տացէ օգնականութիւն ամենայն զօրավարաց մերոց եւ զօրաց եւ զինուորեալ մանկանց.

Զի եւս առաւել արասցէ և մեզ յորդորումն սիրոյ և ի գործս բարեաց,

Ամենակալ Տէր Աստուած մեր կեցուսցէ և ողորմեսցի։

ԿԵՍՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 2

ՀՆԴՍՊ. Տէր ողորմեա, Տէր ողորմեա...

ՇԱՐԱԿԱՆ ԳՁ.

ԴՊ. Ուրախ լեր, սուրբ եկեղեցի, քանզի Քրիստոս արքայն երկնից այսօր պլսակեաց զքեզ խաչիւն իւրով. եւ զարդարեաց զամուրս քո սքանչելի փառօքն իւրովք:

Խընդա յոյժ դուստր սիոնի. քանզի երկիրս երկինք եղեն այսօր վերստին քո նորոգմամբ, եւ թագաւոր երկնաւոր հանեցաւ բընակիլ ի քեզ:

Փառք հօր. Այժմ և միշտ:

Ընդ դասս երկնաւոր զօրացըն վեր առեալ տօնեմբք քեզ այսօր զանդադար փառատրութիւնս. ուրախ լեր հարսն անարատ անբընին քո խորհրդով:

ՍԱՂՄՈՍ

ԴՊ. Գոհացայց զքեզ, Տէր, բոլորով սրտիւ իմով, պատմեցից զամենայն սքանչելիս քո:

Ուրախ եղէց եւ ցնծացայց ի քեզ, սաղմոս ասացից անուան քում, Բարձրեալ:

Արարեր զդատաստանս իմ եւ զիրաւունս, նստար յաթոռ դատաւոր արդարութեան:

Դու զժողովուրդս խոնարհս կեցուցանես եւ զաչս ամբարտաւանից դո՛ւ խոնարհեցուցանես:

Յուսացին ի քեզ ամենեքեան ոյք գիտեն զանուն քո, զի ոչ թողցես զայնոսիկ, որ խնդրեն զքեզ, Տէր:

Որպէս պատմեցից զամենայն օրհնութիւնս քո ի դրունս դստեր Սիոնի, ցնծացայց ի փրկութեան քում:

Ընկլան հեթանոսք յապականութեան իւրեանց զոր արարին. որոգայթ զոր թագուցին առցէ զոսս նոցա:

Աչ քո, տէր, ընկալաւ զիս, եւ խրատս քո կանգնեաց զիս ի սպառ, եւ խրատս քո ուսուսցէ զիս:

Զգեցուցեր ինձ զօրութիւն ի պատերազմի, եւ ըզյարուցեալսն ի վերայ իմ ներքոյ իմ արարեր.

Կենդանի է Տէր եւ օրհնեալ է Աստուած, եւ բարձր եղիցի Աստուած փրկութեան իմոյ:

Աստուած է որ խնդրէ զվրէժ իմ եւ հնազանդ առնէ զժողովուրդս ընդ ինեւ:

Արդար է Տէր, զարդարութիւն սիրէ, զուղղութիւն տեսանեն երեսք նորա:

Փառք Հօր եւ Որդւոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս.

Մի ոմն ի Քահանայից ընթերնու ի բեմէն

Ալէլուիա, Ալէլուիա, Ուրախ եղիցին ազգք և ցնծասցեն ազինք, զի զու դատես զժողովուրդս յուղղութիւն և ազգաց երկրի զու առաջնորդես.

Ընթերցուածս յԱռաջին թագաւորութեանց (Ը. 4–22)

Եւ ժողովեցան ամենայն արք Իսրայէլի եւ եկին առ Սամուէլ յԱրիմաթեմ, եւ ասեն ցնա. Դո՛ւ աւագիկ ծերացար, եւ որդիք քո ո՛չ գնան զճանապարհ քո. եւ արդ կացո՛ ի վերայ մեր թագաւոր, դատել զմեզ որպէս և այլ ազգք։ Եւ չար թուեցաւ բանն յաչս Սամուէլի, զի ասացին թէ

տուր մեզ թագաւոր դատել զմեզ։ Եւ յաղօթս եկաց Սամուէլ առ Տէր։ Եւ ասէ Տէր ցՍամուէլ. Լո՛ւր ձայնի ժողովրդեանդ, որպէս եւ խօսեցան ընդ քեզ. զի ոչ եթէ զքեզ անարգեցին, այլ զիս մերժեցին չթագաւորել ի վերայ նոցա։ Ըստ ամենայն գործոց զոր արարին ընդ իս յօրէ յորմէ հանի զնոսա յԵգիպտոսէ մինչեւ ցայսօր, եւ թողին զիս եւ ծառայեցին աստուածոց օտարաց, նոյնպէս առնեն նոքա և ընդ քեզ։ Եւ արդ լուր ձայնի նոցա. բայց դնելով դնիցես վկայութիւն նոցա, և պատմեսցես նոցա զիրաւունս թագաւորի՝ որ թագաւորեսցէ նոցա։ Եւ խօսեցաւ Սամուէլ զամենայն պատգամս Տեառն առ ժողովուրդն որ խնդրեցին ի նմանէ թագաւոր, եւ ասէ. Այս ինչ լիցին իրաւունք թագաւորին, որ թագաւորեսցէ ի վերայ ձեր. զուստերս ձեր առցէ և արասցէ կառավարս և հեծեալս, և սուրհանդակս առաջի կառաց իւրոց. և կացուսցէ զնոսա իւր հազարապետս և հարիւրապետս, և հնձել զհունձս նորա և կթել զկութս նորա և առնել նմա զէնս և անօթս կառաց։ Եւ զդստերս ձեր առցէ յիւղագործս և ի խորտկարարս և ի հացեփեացս։ Եւ զանդս ձեր և զայգիս ձեր և զձիթենիս ձեր զազնիւս՝ առցէ, և տացէ ընտրկաց իւրոց։ Եւ զսերմանս ձեր և զայգիս ձեր տասանորդեսցէ, և տացէ ներքինեաց իւրոց և ըն-

տրկաց իւրոց։ Եւ զծառայս ձեր և զաղախնայս ձեր և զանդեայս ձեր զազնիւս և զէշս ձեր առցէ և տասանորդեսցէ ի գործ իւր։ Եւ զհօտս ձեր տասանորդեսցէ, և դուք եղիջիք նմա ծառայք։ և ազաղակեսջիք յաւուր յայնմիկ յերեսաց թագաւորին ձերոյ զոր ընտրեցէք ձեզ, և ոչ լուիցէ ձեզ Տէր յաւուրսն յայնոսիկ. զի դուք ձեզէն ընտրեցէք ձեզ թագաւոր։ Եւ ոչ կամեցաւ ժողովուրդն լսել Սամուէլի. և ասէն ցնա. Ո՛չ այդպէս է, այլ թագաւորեսցէ ի վերայ մեր, և եղիցուք և մեք իբրև զայլ ազգս, և դատեսցէ զմեզ թագաւորն մեր և ելցէ առաջի մեր և պատերազմեսցի զպատերազմ մեր։ Եւ լուաւ Սամուէլ զամենայն բանս ժողովրդեանն և խօսեցաւ զնոսա յականջս Տեառն։ Եւ ասէ Տէր ցՍամուէլ. Լուր ձայնի նոցա և թագաւորեցո՛ նոցա թագաւոր։

Ընթերցուածս յՍ.ռակաց (Ը. 12–21)

Եւ՝ իմաստութիւն ընակեցայ ի խորագիտութեան. զխորհուրդս և զգիտութիւն կոչեցի յիս։ Երկիւղ Տեառն ատեայ զանիրաւութիւն, զթշնամանս և զհպարտութիւն, և զճանապարհս չարեաց։ Իմ է խորհուրդ և զգուշութիւն. իմ է հանճար և զօրութիւն։ Ինեւ թագաւորք թագաւորեն և հզօրք զրեն զարդարութիւն։ Ինեւ

մեծամեծք մեծանան և բռունք ինև ունին զերկիր։ Ես՝ որ զիսն սիրեն՝ սիրեմ, և որ զիսն խնդրեն՝ գտցեն շնորհս։ Մեծութիւն և փառք իմ են, և ստացուածք բազմաց և արդարութիւն։ Լաւ է զիս ստանալ քան զոսկի և զանս պատուականս և զարդիւնս իմ քան զարծաթ ընտիր։ Ի ճանապարհս արդարութեան գնամ, և ի մէջ շաւղաց արդարութեան շրջիմ։ Զի բաշխեցից սիրելեաց իմոց զմեծութիւն, և զգանձս նոցա լցուցից բարութեամբ։

Ընթերցուածս յԵսայեայ մարգարէէ (ԾԴ. 4–13)

Մի երկնչիցիս զի յամօթ արարին զքեզ, մի պատկառեսցես զի նախատեցին զքեզ, զի զամօթն յաւիտենից մոռասցիս և նախատինք այրութեան քո ոչ եւս յուշ լիցին քեզ։ Զի Տէր է որ առնէ քեզ զայդ. Տէր Սաբաւովթ անուն է նորա, և որ փրկեացն զքեզ նոյն Աստուած Իսրայէլի ամենայն երկրի կոչեսցի։ Ոչ եթէ իբրեւ զկին մի լքեալ տարակուսեալ կոչեաց զքեզ Տէր, և ոչ իբրեւ զկին մի ատեցեալ ի մանկութենէ. այլ ասաց Աստուած, Առժամանակ մի թողի զքեզ, եւ ողորմութեամբ մեծաւ ողորմեցայց քեզ։ Առ փոքր մի սրտմտութեան դարձուցի զերեսս իմ ի քէն, և ողորմութեամբ յաւիտենից ողորմեցայց քեզ, ասաց որ փրկեացն ըզ-

քեզ Տէր։ Եւ ի ջուրքն հեղեղէ առ Նոյիւ՝ ա՛յս է ինձ, որպէս երդուայն նմա ի ժամանակին յայնմիկ չքարկանալ երկրի, նոյնպէս և ո՛չ քեզ, և ոչ սպառնալեօք իմովք շարժել զերկինս, և փոփոխել զբլուրս, ո՛չ ողորմութիւն իմ պակասեսցէ ի քէն, և ո՛չ ուխտ խաղաղութեան քո անցցէ, ասաց Տէր։ Հաշտեալ եմ ընդ քեզ, տառապեալդ և խախտեալ, մինչև մխիթարեսցիս. ահաւասիկ պատրաստեալ եմ կարկեհան զքարինս քո, և զհիմունս քո շափիղայ։ Եւ կանգնեցից զաշտարակս քո յասպիս, և զդրունս քո յականց վանեայց և ածից շուրջ զքև պարիսպ յընտիր ընտիր ականց պատուականաց, և զամենայն որդիս քո խրատեալս յԱստուծոյ, և ի բազում խաղաղութեան մանկունք քո, և արդարութեամբ շինեսջիր։

Պետրոսի առաքելոյն ի Կաթողիկեայց առաջին թղթոյն է ընթերցուածս (Բ. 9–10)

Այլ դուք ազգ էք ընտիր, թագաւորութիւն, քահանայութիւն, ազգ սուրբ, ժողովուրդ սեպհական, որպէսզի զձեր առաքինութիւնսն նըւիրիցէք այնմ որ զձեզ ի խաւարէն կոչեաց յիւր սքանչելի լոյսն։ Որք երբեմն չժողովուրդ, բայց արդ ժողովուրդ Աստուծոյ, որք չողորմեալք, այժմ ողորմութիւն գտէք։

ՍԱՂՄՈՍ

Դպ. Ցնծացէք առ Աստուած օգնական է մեր, աղաղակեցէք առ Աստուած Յակոբայ։

Առէք սաղմոս և տուք օրհնութիւն, սաղմոս ասացէք նմա ի ձայն քաղցրութեան.

Փող հարէք ի գլուխս ամսոց, յաւուր նշանաւորի տարեկանաց մերոց.

Հրաման է այս Իսրայէլի, և իրաւունք են Աստուծոյ Յակոբայ.

Վկայութիւնն Յովսէփու զոր եդ ընդ նմա, որպէս ելանէր նա յերկրէն Եգիպտացւոց, լեզու զոր ոչ գիտէր, լուաւ.

Ի բաց արարի ի բեռանց գլխիկունս նորա և զձեռս նորա յորթ և ի թի ծառայելոյ.

Ի նեղութեան կարդացեր առ իս և փրկեցի զքեզ, լուայ քեզ ի գաղտնութենէ մրրկին, և փորձեցի զքեզ ի վերայ ջուրցն Հակառակութեան։

ՍՐԿ. Ալէլուիա Օրթի. եւն.

Եւ մի ոմն ի քահանայից ընթերցցի յԱւետարանն Յովհաննու (ԺԵ. 9–12)

Որպէս սիրեաց զիս Հայր և ես սիրեցի զձեզ, հաստատուն կացէք ի սէր իմ։ Եթէ պահիցէք զպատուիրանս իմ, կացջիք ի սէր իմ. որպէս ես զպատուիրանս Հօր իմոյ պահեցի, և կամ ի սէր նորա։ Զայս խօսեցայ ընդ ձեզ, զի ուրախութիւն իմ ի ձեզ լիցէ և ձեր ուրախութիւն լցեալ եղիցի։ Այս է պատուէր իմ զի սի-

բեսչիք զմիմեանս, որպէս և ես սիրեցի զձեզ։ Մեծ ևս քան զայս սէր ոչ ոք ունի, եթէ զանձն իւր դիցէ ի վերայ բարեկամաց իւրոց։ Դուք բարեկամք էք իմ, եթէ առնիցէք զոր ես պատուիրեմ ձեզ։ Ոչ ևս կոչեմ զձեզ ծառայս, զի ծառայն ոչ գիտէ զինչ գործէ տէրն նորա. այլ զձեզ կոչեցի բարեկամս, զի զամենայն զոր լուայ ի Հօրէ իմմէ՝ ծանուցի ձեզ։ Ոչ եթէ դուք ընտրեցէք զիս, այլ ես ընտրեցի զձեզ, եւ եդի զձեզ զի դուք երթայցէք և պտղաբերք լինիցիք, և պտուղն ձեր կացցէ, և զոր ինչ խնդրիցէք ի Հօրէ իմմէ յանուն իմ՝ տացէ ձեզ։ Զայս պատուիրեմ ձեզ զի սիրեսչիք զմիմեանս։

ՀՆԴՊ. Փառք քեզ, Հայր Ամենակալ, որ պարգեւեցեր մեզ զօրս զայս տեսանել բարեաւ և խաղաղութեամբ.

ԴՊ. Օրհնեա՛լ է Աստուած։

ՀՆԴՊ. Դոհութիւն զքէն Միածին Որդի, որ զԱզգ մեր և զեկեղեցի ի մահահանգոյն տառապանացն ազատեալ, հաղորդակիցս արարեր փառաց յարութեան քո։

ԴՊ. Օրհնեալ է Աստուած.

ՀՆԴՊ. Բարեբանութիւն քեզ, Հոգիդ Սուրբ Աստուած, որ վերստին ծաղկեցուցիր յԱզգի մերում զզաւազան իշխանութեան հարցն մերոց։

ԴՊ. Օրհնեա՛լ է Աստուած։

ՀՆԴՊ. Մարդասէր Աստուած, զխաղաղութիւնն՝ զոր շնորհեցիր մեզ փրկեա ի փորձութենէ, զազատութիւնն՝ զոր պարգեւեցիր մեզ պահեա ի չարեաց, և զամենայն զկեանս մեր ի զործըս բարիս առաջնորդեա.

ԴՊ. Ամէն.

ՀՆԴՊ. Ողորմեա՛ հարց և եղբարց մերոց, մարց և քերց մերոց և մանկանց որբացելոց որք ի գերութեան են և ի չար ծառայութեան.

ԴՊ. Ազատեա, Տէր և ողորմեա.

ՀՆԴՊ. Տէր Աստուած մեր, յիշեա ողորմութեամբ քով զհոգիս բազմերամ նահատակաց մերոց, որք եղին զանձինս իւրեանց ի սեղան փրկութեան Ազգին և հաւատոցս և լուսեղէն և երկնային անթառամ պսակացն զնոսա արժանիս արա՛.

ԴՊ. Յիշեա՛ Տէր, և ողորմեա՛.

ՀՆԴՊ. Ողորմեա՛ երախտաւորաց և պաղատուից, և ամենայն վաստակաւորաց և սպասաւորաց յազատութիւն Ազգի և ի շինութիւն Հայրենեաց մերոց.

ԴՊ. Տէր ողորմեա.

ՀՆԴՊ. Տէր Աստուած մեր, օգնեա թագաւորացն քրիստոնէից և իշխանացն բարեպաշտից և

նախարարաց և նախագահին Ազգիս Հայոց և ամենայն զօրավարաց և զօրաց և զինուորական մանկանց, պահելով ի խաղաղութեան։

ԴՊ. ԱՄԷՆ.

ՀՆԴՊ. ՏԷՐ Աստուած մեր, պահեա զՀայրապետն Ազգիս, զԿաթողիկոսն ամենայն Հայոց և զհամօրէն ուխտ եկեղեցւոյ քո սրբոյ ի խաղաղութեան։

ԴՊ. ԱՄԷՆ.

ՀՆԴՊ. Նշանաւ սուրբ և պատուական խաչիւ քով, հալածեա զերեւելի և զաներեւոյթ թշնամին ի սահմանաց հայրենեաց մերոց և ի բնակութենէս մերմէ և փրկեա՛ զմեզ ի հրոյն յաւիտենից և քեզ փառք ի յաւիտեանս, Ամէն։

ԴՊ. ԱՄԷՆ.

ՇԱՐԱԿԱՆ Ա.Կ.

ԴՊ. Նրշանաւ ամենայաղթ խաչիւրդ fo Քրիսսոս պահպանեա զմեզ մարդասէր յաներեւոյթ բշնամւոյն. զի դու միայն եւ բազաւոր փառաց օրհնեալ յաւիտեան։ Որ ի վերայ սուրա տարածեցեր զանարատ բազուկրս fo. եւ հեղեր զարիւնդ ի փրրկութիւն տիեզերաց. զի դու։

Փառք հօր. Այժմ և միշտ։

Ի միւսանգամ fo գալրստեանրն յերեւիլ սուրբ նշանիս արժանի արա ըզծառայս fo վերրստին նորոգման. զի դու։

ՍՐԿ. Խնդրեսցուք հաւատով միաբանութեամբ Ի Տեառնէ, զի զողորմութեան զշնորհս իւր արասցէ ի վերայ մեր, Տէրն ամենակալ կեցուսցէ և ողորմեսցի։

ՀՆԴՊ. Տէր ողորմեա, Տէր ողորմեա...

Եւ ապա Հանդիսապետն ընթերցցի զաղօթս զայս

Տէր Աստուած փառաւորեալ յամենայնի, զքեզ բարեբանեմք յամենայն ժամ, զի դու ես սրբութիւն մեր և պսակ հաւատացելոց. անաւոր և սքանչելի է անուն քո։

Քո է մեծութիւն և զօրութիւն և պարծանք և յաղթութիւն և կարողութիւն. վասն զի դու ամենեցուն՝ որք են յերկինս և ի վերայ երկրի, տիրես. յերեսաց քոց դողան ամենայն թագաւորք և ազգք. ի քէն է մեծութիւն և փառք. դո՛ւ ես ամենեցուն իշխան՝ Տէր, և իշխան ամենայն իշխանութեանց, ի ձեռին քում է զօրութիւն և հարստութիւն, և ի ձեռին քում ամենակալ մեծութիւն զօրացուցանել զամենայն։

Եւ արդ, Տէր, մեք ամենեքեան ծառայք քո և որդիք ծառայիցն քոց որք ի սկզբանէ հաճոյ եղեն քեզ, ժողովեալքս աստէն յաւուր ցընծութեան և յիշատակի ազատութեան Ազգիս Հայոց և հաստատութեան Աթոռոյ Իշխանութեան Հայաստանեայց, երկրպագեմք առաջի կամաց քոց, գոհանամք զքէն և օրհնեմք զանուն պարծանացդ, զի ոչ մոռացար զմեզ ի սպառ, այլ

գթացեալ ի մեզ՝ ի շնորհ բազմապատիկ նախատակութեանցն որք գործեցան յաշխարհի մերում ի ձեռս արանց պատուականաց՝ այց արարեր մեզ և փրկեցեր զմեզ ի ձեռաց թշնամեաց մերոց։

Խաղաղութիւն ամենեցուն,
Աստուծոյ երկիրպագեսցուք:

Լո՛ւր ձայնի աղաչանաց ծառայից քոց, և զվերականգնեալս ի մեզ շնորհիւ ողորմութեան քո զԱթոռ իշխանութեան Հայաստանեայցս անսասան պահեա։ Եւ որոց գլուխ են կարգեալ իշխանութեանդ այդմիկ՝ ամենեցուն յաւե՛լ ըզշնորհս իմաստութեան, զի կարող լինիցին ուղղութեամբ արդարութեան առաջնորդել ժողովրդեան քում, զի որք պատուենն զիմաստութիւն, նոքա միայն թագաւորեսցեն յաւիտեան։ Եւ զօրավարաց մերոց և զօրաց եւս առաւել պարգևեա հոգի արութեան։ Տնկեա՛ ի մեզ յամենեսին զսէր սրբութեան և զգօնութեան, ճանաչել զիմաստութիւն և զխրատ և առնել զպարտըս մեր ի պահպանութիւն ամենայն օրինաց, որք հային յօգտակարութիւն յազգի մերոյ։ Աղբերացո՛ ի սիրտս ամենեցուն զգութ մարդասիրութեան, զի կարող լինիցիմք գործովք բարեաց կատարումն առնել սիրոյ հայրենեաց։ Կարկառեա՛ զամենառատ աջ ողորմութեան քո և օրհ-

նեա՛ զհամօրէն ժողովուրդ մեր, զազգս Հայոց և զեկեղեցիս Հայաստանեայց. զի հանգիցէ ի նոսա և կացցէ մնասցէ յաւիտեանս ժամանակաց հոգի սիրոյ և խաղաղութեան՝ գիտութեան և Աստուածպաշտութեան։

Օրհնեա՛, Տէր, և զաշխարհ մեր և զերկիր հայրենի, զի յորում զառաջինն հաստատեցիր զտեղի դրախտին երանութեան, և զոր ապա զդարս բազումս ձեռք անօրինացն արարին վայրաւերակաց, քառահոլով վտակացն պարարտութեամբ վերստին ծաղկազարդեալ պայծառասցի ի վայելումն ամենայն բարութեանց երկնաւորաց և երկրաւորաց. սրբեա զեկեղեցիս մեր և զվանորայս որ ի նմին, զդպրատունս մեր և ըզյարկս գթութեան, և զամենայն սահմանս նորա պարսպեա պահպանութեամբ քով ընդդէմ յարձակմանց թշնամւոյն։ Օրհնեա՛ Տէր, զամենայն բան բարի որ ի նմին, և զկոչումն իւր զլխովին, զանունդ Հայաստան։

Հայաստանդ անուն ցանկալի, ձայն գորովական և փարելի, երկնաւոր երգոցն նուագաց արժանի, յորում ամենայն յուշքն անցելոյն և յոյսք ապառնեացն պահին, զոր ոչ կարացին հանել քերել ի շրթանց մերոց մանաւանդ թէ և ի սրտից բռունցք աշխարհիս և դիպուածք ժամանակաց, հնչեսցէ՛ այժմ ծագաց ի ծագս երկ-

ըի, և որք ի հեռաստանեայ սահմանս աշխարհի սփռեալ կան նժդեհութեամբ, ամենայն հայկազունք ի լուր նորա՝ որպէս ամպս թռուցեալս ձագախառն երամովին եկեսցեն առ նա, զի փրկութիւն Տեառն եհաս մեզ.

Եւ դու, Մայրս մեր սուրբ եկեղեցիդ Հայաստանեայց, դուստր Նորոյս Սիոնի, որ զայնքանի դարս ի գիրկս քո բարձեր զմեզ, որպէս զորբացեալ մանկունս, և կաթամբ սրբոյ աւետարանին չամբեցեր մեզ զյոյս փրկութեան մերոյ, որ զամենայն աւանդս յիշատակաց, և ըզնշանակս փառաց հարցն մերոց և զիրգ մեր համօրէն ի ծոցի քում պահեցեր անարատս, ցնծա՛ և ուրախ լեր.

Եւ դուք ժողովուրդ Հայոց, որդիք Հայկայ և որդեգրեալք եկեղեցւոյս Հայաստանեայց, առէք զսպառազինութիւն հաւատոյդ դիք ի գլուխս ձեր զսաղաւարտ յուսոյն, արի՛ք ընդ առաջ, և երգեսցուք ամենեքեան. Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն ի մարդիկ հաճութիւն։

ԴՊ. Եւ օրհնութիւն քեզ ի բարձունս, օրհնեալ ես Տէր Աստուած մեր. օրհնեմք զքեզ եւ գովեմք զքեզ: Խոստովանիմք Տէր զքեզ եւ երկիր պագանեմք քեզ. փառաւորեմք զքեզ. գոհանամք Տէր զքեզ վասն մեծի փառաց քոց: Տէր թագաւոր սուրբդ

երկնային. Աստուած եւ Հայր ամենակալ: Տէր եւ Որդի Հօր միածին Յիսուս Քրիստոս եւ սուրբ Որդի: Տէր Աստուած Գառն Աստուծոյ եւ Որդի Հօր, որ առեր ըզ-մերս ի կուսէն: Ողորմեցար, բարձեր զմեղս աշխարհի. եւ արդ ընկալ զաղաչանս մեր: Սուրբդ որ նստիս ընդ աջմէ Հօր՝ ողորմեաց մեզ: Զի դու միայն սուրբ, դու միայն բարձրեալ ես, դու միայն Տէր մեր Յիսուս Քրիստոս: Տէր եւ Հոգիդ սուրբ՝ որ ի փառս Աստուած ընդ Հօր. ամէն:

Եւ յամենայն ժամ օրհնեմք զքեզ: Տէր, եւ գովեմք զանուն սուրբ քո յաւիտեան եւ յաւիտեանս յաւիտենից: Արժանի արա Տէր զօրս զայս խաղաղութեամբ, եւ առանց մեղաց պահեա զմեզ: Օրհնեալ ես Տէր Աստուած հարցն մերոց. գովեալ եւ փառաւորեալ է անուն սուրբ քո յաւիտեանս ամէն: Օրհնեալ Տէր՝ ուսո՛ ինձ զարդարութիւնս քո. (*երիցս կրկնել*): Տէր ապաւէն եղեր մեր ազգէ յազգ: Ես աղաչեմ Տէր ողորմեա՛ ինձ եւ բժըշկեա՛ զանձն իմ, ես մեղայ քեզ: Ցոյց մեզ Տէր զողորմութիւնս քո. եւ զփրկութիւնս քո տուր մեզ: Տէր ողորմութիւն քո յաւիտեան. զգործս ձեռաց քոց մի՛ անտես առներ: Տէր իմ զքեզ ապաւէն ինձ արարի. ուսո՛ ինձ առնել զկամս քո, զի դու ես Աստուած իմ: Ի քեն է Տէր՝ աղբիւր կենդանութեան. եւ լուսով երեսաց քոց տեսանեմք զլոյս: Ծագեա՛ զողորմութիւնս քո՝ որք ճանաչեն զքեզ Տէր:

ՍՐԿ. Սուրբ խաչիւս.

ՀՆԴՊ. Պահպանիչ և Հայր մեր.

A 7524

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 2

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0044198

[204]

A I 7524